


ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈԿՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԳԻ ՊԱՏՄԱԽՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԿԻՊԵՐԳԻ ՆՈՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(«ԹՈՆՈՂՐԱԿԵԾԻՆԵՐ»)՝



Մեծ ու անպարփակ մի աշխարհ է Հ. Շիրագի «Թոնողրակեցիները»¹ ծավալուն պոեմը: Այն իմաստուն, հոգեցունց, մարդկայնորեն վեհ ու գեղեցիկ, ապրեցնող, սթափեցնող և դեպի անապական ու զուլալ իմացությունն ու երազը տանող ճանապարհ է:

Գնալով հարստանում է արդեն ամուր հիմքերի վրա դրված շիրագագիտությունը: Համալրվում է նոր աշխատություններով, շիրագյան արվեստի նոր մեկնաբանություններով: Հետմահու տպագրվեցին «Հայոց դանթեականը», «Անին» և «Թոնողրակեցիները» ստվարածավալ, պատմափիլիսոփայական պոեմները (հոգածու հովանավորի շնորհիվ շարունակվում են լույս աշխարհ գալ նաև այլ անտիպ էջեր. «Հուշարժան հայրիկիս», «Անտիպ էջեր»): Դրանք գտնում են իրենց արժագանքները բանասեր մտավորականության կողմից: Այս կապակցությամբ

մեծ շիրագագետ Ս. Մուրադյանը հավուր պատշաճի նշել է. «(հիշված գործերը) ...ընթերցած մասնագետներն անգամ խոստովանեցին, թե մեր առջև է մի նոր ու հզոր բանաստեղծ: Պարզվում է, սակայն, որ բանաստեղծի ողջության օրոք և հետմահու հիշյալ տպագրվածներով չի սամանափակվում իր բեղմնավորությամբ էլ բացառիկ Հովհ. Շիրագի գրական ժառանգությունը»²:

Վերջերս տպագրվեց Բ. Գ. թ., դոցենտ Ս. Մինասյանի «Հոկիաննես Շիրագի «Թոնողրակեցիները» պոեմը»³ քառասուն մամուլանոց գիրքը, որը շիրագագիտության մեջ նոր ու թարմ խոսք է գրականագիտական ու լեզվաբանական վերլուծություններով ու մեկնաբանությամբ: Հեղինակի հավաստիությամբ Արցախի մտավորականներին ևս հետաքրքրել է Հ. Շիրագի՝ ավելի քան վաթսու տարի խորհրդային կարգերում չտպագրված պոեմը («Անին» և «Հայոց դանթեականի» հետ. վերջինս քառասուն տարի է լռեցվել): Հ. Շիրագի «Թոնողրակեցիները» պոեմը քաղաքական մեծ արժեք ունեցող երկ է, հետաքրքիր ավանդ թոնողրակյան աղանդավորական շարժման մեկնաբանման մեջ: Գրականագետ Ս. Խանյանն իր «Թոնողրակյան աղանդավորական շարժման շիրագյան մեկնաբանումը»⁴ աշխատության մեջ նշել է, որ խորհրդային տարիներին թոնողրակյան շարժման վերաբերյալ իրենց գնահատականներն ի ցույց դրեցին մի շարք հայագետ գիտնականներ ու գրողներ: Պրոֆեսոր Ս. Խանյանը, ծայրահեղության

¹ Հովհ. Շիրագ, «Թոնողրակեցիները», Եր., 2014, 328 էջ:

² Ս. Մուրադյան, «Հոկիաննես Շիրագի անտիպների աշխարհը», «Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու», Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, Ե., 2018 թ., էջ 402:

³ Ս. Մինասյան, «Հոկիաննես Շիրագի «Թոնողրակեցիները» պոեմը», Ստեփանակերտ, 2019 թ., 320 էջ:

⁴ Ս. Խանյան, «Թոնողրակյան աղանդավորական շարժման շիրագյան մեկնաբանումը», Ստեփանակերտ, 2017, էջ 10-11:

հասած այդ բողոքը, համարել է մեր երկրի համար վտանգավոր վիճակ, որովհետև վտանգված էր հայոց պետականությունը՝ հայրենիք ներխուժած օտար վայրենի ցեղերի կողմից (ն. տ., էջ 10-11):

Շիրազագիտության մեջ (հատկապես՝ ոճագիտություն) ակնհայտ վաստակ ունեցող բանասեր գիտնականը պատահականորեն չի ձեռք մեկնել շիրազյան այս մեծ գործին: Նախ՝ մեծ Շիրազի պոեմը հայ ժողովրդի ցավերին ու տառապանքներին, հույսերին ու ակնկալիքներին տեղյակ մարդու բարձրաձայն խոհ է, տեղեկություն մարդկային հոգու և ցավի մասին: Այստեղ մեծատաղանդ Հովհ. Շիրազի բանաստեղծական տարերքն է՝ մերթ պոռթկուն, մերթ մտորուն, փիլիսոփայորեն խոհեմ, կյանքը, աշխարհը նորորեն տեսնելու մոլուցքով լեցուն, զսպաշապիկից ազատվելու տենդով բռնկված:

Ս. Մինասյանն այս պոեմում տեսել է միջնադարյան եկեղեցական դատ ու դատաստան, հեղձուկ խլացում, աշխատավորի պոռթկուն ձիչ, մի նոր փրկչի պահանջ, որ պետք է դուրս գար ու գուժեր վտանգի մասին՝ հայոց պետականության հանդեպ սրբազան երկյուղածությամբ համակված: Ս. Մինասյանի համար հոգու պարտք էր տաղանդաշատ Հովհ. Շիրազի գրական ու մարդկային, արվեստագիտական քանքարի բացահայտումը, որի գերխտացումը կարելի է համարել «Թոնդրակեցիները» պոեմը: Աշխատությունը թեմատիկ առումով բաղկացած է երեք բաժնից: Առաջին մասը վերաբերում է մեծ բանաստեղծի մատուցածի գրականագիտական արժևորմանը, երկրորդը՝ լեզվաբանական, ոճագիտական դիտարկումներ է, իսկ երրորդն այդ ստեղծագործության բառարանագրությունն է՝ որոշ մասնակի բացահայտումներով:

Ս. Մինասյանի աշխատության առաջին գլխում բացահայտված է պոեմի ստեղծագործական պատմությունը՝ կապված նրա հակախորհրդային տարրեր պարունակելու հանգամանքների հետ: Պոեմը բնութագրվել է որպես պատմափմաստասիրական էպիկական ծավալուն երկ՝ Սմբատ Ջարեհավանցու գլխավորությամբ, քրիստոնեական կրոնի դեմ պայքարի ելած մարդկանց (ղեկավարության) բանադրության շուրջ: Հետաքրքիր ու հիմնավորված ընդհանրացումները վկայում են հեղինակի կողմից 9-11 դարերում ծավալված թոնդրական շարժման պատմության տքնաջան ուսումնասիրությունը: Ս. Մինասյանը պոեմը դիտարկել է որպես իրավաբանական յուրօրինակ փաստաթուղթ, ուր մեծն Շիրազը, գերի չդառնալով պատմականությանը, ուշադրություն է դարձրել իրավական, կրթական մակարդակի բազում հարցերի ու երևույթների: Բանաստեղծը չի մեծարել թոնդրակեցիներին, այլ կարողացել է գեղագիտական հակադրումով հավուր պատշաճի արժևորել նրանց համամարդկային որոշ երազուն ճիշտ ձգտումները⁵:

Խոսելով թոնդրական շարժման պատմությունից՝ Ս. Մինասյանն անդրադարձել է մեծանուն գիտնականներ Ս. Աբեղյանի, Ս. Աղաբաբյանի գրականագիտական ու պատմական հիշատակումներին՝ կապված ժամանակի գաղափարախոսության բացահայտման հետ:

Միանգամայն ճիշտ ու նպատակային է գրողներ Հովհ. Շիրազի ու Վ. Դավթյանի նույն պոեմների համեմատությունը՝ հաստատված փաստացի օրինակներով: Այս կապակցությամբ Ս. Մուրադյանը նշել է. «Առողջ մտածողությամբ ու սթափ հայացքով, անկուսակցական ու անկողմնակալ պատմագետի խորաթափանցությամբ է բանաստեղծը մխրձվել հայոց պատմության խորքերը և այնտեղից պեղել ներկա և գալիք սերունդների համար անհրաժեշտը, ուսանելի կարևորագույն դրվագները, վերակերտել է դրանք գեղարվեստի լեզվով՝ գրեթե միշտ տալով իրողությունների և պատմական անձնավորությունների գեղարվեստականացման բացառիկ հաջող օրինակներ»⁶:

⁵ Էջ 5, Մինասյան Ս., նշվ. աշխ. էջ 5:

⁶ Էջ 10, Հովհ. Շիրազ, «Թոնդրակեցիները», Եր., 2014, 328 էջ:

Ս. Մինասյանը «Հովհաննես Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմի սյուժեն» բաժնում փորձել է յուրովի մեկնաբանել թոնդրակյան շարժման իրողությունը: Պայքարում պարտված թոնդրակեցիները գերեվարվել ու բերվել են Անի: Մայր տաճարում՝ Աստծո տանը, կաթողիկոսի ու արքայի գլխավորությամբ իրավաբանական գործընթաց է եղել: Թոնդրակեցիները չեն խոնարհվել կաթողիկոսի ու իշխանների առաջ, միայն արքային են թեթև գլուխ տվել ու ողջախոս դատողությամբ վեր լուծել իրենց պայքարի պատճառները (մասնակի նկարագրություններով տրվել են հետաքրքրաշարժ գեղագիտական արժեքավոր ու երկրորդական պահեր):

Պոեմի գաղափարական բովանդակությունը բացահայտելիս Ս. Մինասյանը երբեմն փորձել է շատ դժվար տեսանելի հանգամանքներից բխող մեկնաբանություններով բացահայտել ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական իրավիճակը: Միանգամայն տեղին ու նպատակային են «Թոնդրակեցիները» և «Անի» պոեմների շփման եզրագծերի բացահայտումները:

Հովհ. Շիրազը Հովհաննես (Օհան) Սմբատ Բագրատունի արքային այնքան էլ չի համակրել (գերադասել է Տիգրան Մեծի նման արքան. «Թոնդրակեցիներում» դա այնքան էլ զգալի չէ, բայց «Անիում» բացահայտ է): Արքաներն արժիվ պիտի լինեն, ոչ թե գետնաբարձ թռչուն կամ կենդանի: Երիցս ճիշտ է Ս. Մուրադյանը. «Արքան ամրակայված է հայրենիք ստեղծելու, պահպանելու համար: Նա պետք է խելացի ու ձկուն լինի»⁷

Արքան պետք է ուժ ունենա՝ հավաքելու, հզոր բանակ ստեղծելու գիտակցություն և ունակություն: Ինեց դա է երկի գաղափարական բովանդակությունը, որի առանցքային հարցերն են հայրենասիրությունը, միասնությունը, միաբանությունը, կյանքի կեցության և ազատության, հողի՝ հաց, աշխատանք ունենալու բարոյաիրավաբանական խղճի, հայության մասնատվածության ցավի հարցերը:

Գաղափարական դժվարամարս հարցերի վերլուծությամբ, ժամանակի լաբիրինթոսում լավն ու վատը տարբերակելու միտումով մեծ Շիրազը փորձել է արդիականացնել թոնդրակյան շարժումը: Այն, ինչ այն ժամանակներում բացասական էր, այսօր էլ դեռ դրական չէ, այսօր էլ շատ հարցեր դեռ անլուծելի են, ուժեղներին կուլ են գնում փոքր ազգերը: Հեղինակը հետաքրքիր դիտարկումներով փորձում է գտնել հավատի, ուժի, երազում կյանքի շիրազյան զարկերակը, համաշխարհային հավասարության տեսությունը, որը ցնորք է: Չկա համամարդկայինը: Բոլորի նպատակը թույլին ճնշելն է: Սա է բխում Հ. Շիրազի փնտրտուքներից, օտար օրենքներից ծերբազատվելու, ազգայինը ստեղծելու երազանքը դեռ բոլորինը չէր: Պետք է հպատակվել մարդկային, երկրային կյանքին: Ս. Մինասյանը փորձել է բացահայտել մեծ գրողի ստեղծած Սմբատ Ջաղեհավանցու թերի հասկացվող կերպարը: Նա դեռ հասուն միջավայրում և քաղաքական նպատակավոր պայմաններում չէր եղել, ուստի այդպիսի մեծությունը, հայրենիքին վնասելով, կործանվել է՝ իր հետ տանելով նաև պայծառ կյանք երագող լավ ու բարի մարդկանց: Ցավոտ ու իրարամերժ կարծիքներից հեշտ չէ գատել զուտ գեղագիտականը, մարդկայինը: Ժամանակները բարդ ու խճճված էին: Եվ այդ բարդություն շիրազյան հանձարն ինքնատեսությամբ նկատել էր որ թոնդրակյան մոտեցումները հասարակ ժողովրդի համար էր՝ ֆիզիկական ծանր աշխատանքից հոգնած, սոված ու տգետ աշխատավորին, որը երազում էր միայն հանգիստ ու անդորրավետ կյանքի մասին, բայց այդ պայքարն ընդամենը փորձության շրջան էր: Ահա թե ինչու շատ հարցերում, նույնիսկ ընտանեկան, խոտորումներ են ունեցել: Քննարկվող գրքի հեղինակը այս հարցը նրբորեն միահյուսել է Հ. Շիրազի անձնական դրամային: Սա, իհարկե, վիճարկման ենթակա հարց է, մեծ գրողի անձնական կյանքի մուտ ոլորտներն ուսումնասիրողների համար դուռ է բացում:

⁷ Նույն տեղում էջ 18:

Ուսումնասիրելով թոնդրակեցիների՝ հավատի հանդեպ ունեցած մոտեցումը, հեղինակը շեշտել է այն հանգամանքը, Հ. Շիրազը ձգտել է զուտ հայկական հավատի, զուտ մարդկային խղճի: Վկան՝ Հուսիկ Աղավնունու քրիստոնեական հազարամյա փորձը՝ «Հավատն աղեղ է, և հույսն է մետղը» կամ «Անգեն հավատն է գինյալ բերդն առնում (281)» և այլն: «Հավատի մեծ ջատագով էր պոեմի հեղինակը, բայց հենված հայկականի վրա», - ընդհանրացրել էր քննարկվող գրքի հեղինակը, ապա կետ առ կետ բացահայտել թոնդրակեցիների վերաբերմունքը երկնային ու երկրային կյանքերի նկատմամբ:

Քննարկված է նաև աշխատավոր մարդու իրավական նորմերի բացակայության հարցը: Հետաքրքիր դատողություններ կան պոեմի պատմական ժամանակաշրջանի և Հ. Շիրազի ապրած ժամանակաշրջանի բարոյական նորմերի շուրջ: 5 կետի տակ հեղինակը միանգամայն համոզիչ փաստարկներով բացահայտել է թոնդրակեցիների թերությունները: Բավականին բարդ է թոնդրական շարժման խորքային բացատրությունը՝ կապված պաշտպանական ուժի, թոնդրակեցիների դեմ պայքարի, թշնամիներով շրջապատված երկրի համար վտանգավոր իրավիճակի, Սմբատ Ջարեհավանցու հունաբույզանդամետ լինելու հարցերի հետ: Հեղինակը փորձում է այս երևույթները կապել Շիրազի ապրած ժամանակաշրջանի հետ: Թեպետ որոշ զուգահեռներ վիճելի են, բայց զգացվում է հեղինակի որոնող միտքը, Հ. Շիրազին բոլոր կողմերից դիտելու ցանկությունը:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Սմբատ Ջարեհավանցու կերպավորումը: Շիրազյան հանձարը բացահայտել է նրա դրական ու բացասական հատկանիշները (ահեղ աղանդի առաջնորդը մեծ, 95): Ըստ Հ. Շիրազի՝ Ջարեհավանցուն հայ ժողովուրդը համակրել է, որովհետև ճշմարտությամբ ու խղճով էր առաջնորդվել դեպի հասարակ աշխատավոր մարդը: Նպատակն էր՝ աշխատավոր հասարակ մարդուն տեսնել ազատ, երկնային կյանքի հավատալիքներից ձերբազատված և երկրայինով ապրող: Բազմաթիվ խոսույն օրինակներ ապացուցում են Մեծն Շիրազի ցավն այդպիսի անհատականության կորստի, հայ իրականության մեջ ճիշտ չգնահատվելու համար: «Սմբատ Ջարեհավանցին մարդկության շահադիտական ձգտումների գոհ էր, կորուստ՝ հայկական ու համաշխարհային մակարդակով»⁸, - ընդհանրացրել է Ս. Մինասյանը: Տիկին Մինասյանը շիրազյան արվեստի առավելություններից է համարել կերպարը բազմակողմանիորեն դիտելը, նրա առավելություններն ու թերություններն ընդունելը, դրանց դերը մարդկային ճակատագրում:

Հեղինակը, ընդհանրացնելով իր խոսքը, գրել է. «Սմբատ Ջարեհավանցին ժողովրդական հիշողություններում և մեծ բանաստեղծի կողմից մեծարվել ու դրական է հիշվել իր մարդասիրական, ողջախոհական՝ գիտականորեն զարգացած լինելու հատկանիշներով... Ջարեհավանցու գործունեության մեջ բացասական է Հայաստանի քաղաքական իրավիճակը չհասկանալը, վնասված, օտարներով լցված փոքր հայրենիքի թուլանալը չըմբռնելը, մարդկային հակադիր սեռերի զգացական ազատությունն անառակության վերածելը, ընտանիքի բարեկեցությունը հասարակական դարձնելը և այլն»⁹:

Հետաքրքիր են նաև արքա Սմբատ-Հովհաննես Բագրատունու, սպարապետ Վահրամ Պաիվավունու, կաթողիկոս Հուսիկ Աղավնունու, Մագիստրոս// Փիլիսոփոս// Գրիգոր Պաիվավունու, նախարարների, վկաների, թոնդրական յոթնյակի այլ ներկայացուցիչների (հատկապես զույգ քույրեր՝ ջուխտակներ, Կամարան ու Ախնին), թոնդրալուիների և այլոց կերպավորումները:

⁸ Էջ 24, ն. ա.:

⁹ Էջ 19, ն. ա.:

Հեղինակն առանձնակի ուշադրություն է դարձրել գեղագիտական, պատկերասրտահայտչական գունավորման համար կիրառված հանրաճանաչ անուններին, հայկական դիցային անվանումներին:

Ս. Մինասյանի տքնաքան աշխատանքն ենք տեսնում կերպարների դասդասումներում՝ յուրաքանչյուր մտքի հաստատման համար բերված համապատասխան հնչեղ ու խոսուն օրինակներով:

Ս. Մինասյանն առանձնակի ուշադրություն է դարձրել գեղագիտական, պատկերային համակարգում հզոր Շիրազի կողմից ընդգրկված հանրաճանաչ հնչեղ անուններին, հայկական դիցային անվանումներին: Ուշադրությունից չեն վրիպել օտարազգի հանրաժանոթ խոսուն անունները:

Յուրօրինակ քննության են արժանացել հողի, սերնդատվության, իրավաբանական, հավատի, իմաստասիրական շատ հարցեր:

Քննարկվող աշխատանքն ապացուցում է, որ Ս. Մինասյանն անսքող, սրտացավ վերաբերմունք ունի մեծ գեղագետ Հովի. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմի յուրաքանչյուր տողի, բառի հանդեպ, ակնհայտ է նրա ծնրադրությունը Մեծն Շիրազի բանարվեստին, խորհրդային կարգերում այդպիսի թեմայով հանդգնորեն հանդես գալուն, դատաիրավաբանական նրա հզոր խոսքի զորությանը, որը հայ իրականության մեջ թերևս սկզբնավորվել է հենց դրանից սկսած (ի դեմս Մխիթար Գոշի, որին հեղինակը մեծարել է հենց սկզբից՝ «Նախերգանքում»):

Բնագրային դիպուկ օրինակները վկայում են շիրազյան գեղագիտական մտքի և հույզի անախ աշխարհի, նրա բացահայտ ու ճշմարիտ պահանջի, խոհուն մտածողության, մարդուն մարդ պահելու խոր ընկալումների մասին:

Մի աստվածայնի պիտի հավատաս,

Մի խղճի ծայնի, որ գեթ մարդանաս:

...Ո՛վ մարդ, մի բանի պիտի հավատաս,

Մարդուց վեհ բանի, որ աստվածանաս:

Թեկուզ չլինի՝ պիտի հավատաս,

Որ աստված լինի, որ գեթ մարդ մնաս (326):

Հեղինակի վերլուծությունները թե՛ ճանաչողական են, թե՛ ուսուցողական: Յուրաքանչյուր մեկնաբանության մեջ բացահայտվում է Շիրազ հանձարը, ժողովրդի պատմությունը, ժամանակաշրջանը պատկերացնելու նրա տաղանդը, նաև հոգու դժգոհության բազում պոթելումները:

Պոեմը ենթարկված է հանրագիտարանային վերլուծության՝ կապված կյանքի տարբեր բնագավառների՝ մեկնաբանման, հատկապես իրավաբանական քննաբանական, հայոց նոր տիպի ապրելակերպի հակիրճ նկարագրության հետ:

Վերլուծությունների առանցքում Հ. Շիրազի հավատամքն է ամեն մի կապանքից ազատ մարդը, հանուն ճշմարտության և արդարության մաքառելու նրա ձգտումը:

Բանասիրության ընդհանուր խնդիրների լուսաբանման համար խիստ կարևոր է գրականագիտության և լեզվաբանության արդյունավետ համագործակցությունը:

«Գրականությունը խոսքի արվեստ է, նրա մեջ ամեն ինչ արտահայտված է լեզվի միջոցով: Լիակատար չափով և անվերապահորեն նաև գրականությանն են վերաբերում հասարակության և ազգության կյանքում լեզվի բացառիկ կարևորության բոլոր ըմբռնումները¹⁰», - գրել է Էդ. Ջրբաշյանը:

Այս հավատամքով է Ս. Մինասյանն աշխատանքի հաջորդ բաժինները նվիրել Հովի. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմի լեզվական ատաղձի մեկնաբանմանը: Քաջ գիտակցելով որ գրականագիտությունը իր բոլոր մակարդակներով չի կարող շրջանցել գրողի միակ և անփոխարինելի գեների՝ լեզվի կարևորության խնդիրը՝ Ս. Մինասյան

¹⁰ «Գրականագիտության ներածություն», Եր., 1996, էջ 131:

նը Հովհ. Շիրազի լեզվարվեստը քննում է հեղինակի պատկերավոր մտածողության շրջանակներում: Նա, լեզվական ընդհանուր օրենքներից ելնելով, բացահայտել է գեղարվեստական երկի խորքային երանգները: Միանգամայն ողջունելի է այն երևույթը, որ հեղինակը չի ծավալվում լեզվական իրողությունների բացահայտման հարցում, քանի որ գրականագիտական մոտեցումը լեզվական հարցերին էապես տարբերվում է լեզվաբանական մոտեցումից:

Լեզվաբանը ճիշտ է ըմբռնել այն երևույթը, որ գրականության լեզուն ավելի քան մշակված է, ենթարկված որոշակի գեղարվեստական խնդրի, ահա թե ինչու բերված բազմաթիվ օրինակները ծանր ու թեթև են արված, հստակեցված ու բացահայտված են Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմի լեզվական միջոցների բազմազանությունը, ձկունությունն ու ներդաշնակությունը: Եթե Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմի լեզվարվեստում կան շեղումներ ընդունված նորմերից ու բառապաշարից, ապա դրանք հերոսների խոսքի անհատականացման, միջավայրի տիպականացման, դիպուկ ու խոստուն հանգամանքների ստեղծման համար են:

Քննարկվող գրքի II գլխում («Հովհաննես Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմի լեզուն և ոճը») հեղինակը, հենվելով լեզվաբանական հավաստի աղբյուրների վրա, վերածանում է պոեմի հնչյունաբանական ոճական արժույթները, նույն հնչյունների լեզվաոճական կիրառությունները, նման

հնչյուններով սկսվող կից բառերի գործառույթը, կրկնատառ բառերը, հնչյունափոխությունները, մեծատառի կիրառությունը, հանգը, հնչերանգային կետադրության գործածությունը, կախման կետերը: Ոճաբանության գիտակ հեղինակը յուրաքանչյուր բառի, արտահայտության ոճավորում դիտում, քննում է ամբողջ երկի կառուցվածքային համապատկերում:

Պրոֆ. Էդ. Ջրբաշյանը ավելորդ է համարում այն վեճը, թե բանասիրական ուժի գիտությանն է պատկանում ոճագիտությունը: «Ոճագիտությունը գրականագիտությունը և լեզվաբանությունը կապակցող օղակ է: Գեղարվեստական խոսքի մեջ գործում է լեզվի և մտածողության անխզելի միասնության օրենքը»¹¹:

Գեղարվեստական երկի բովանդակությունը ոչինչ է առանց բառի գեղագիտական արժեքի: Այս իմաստով է հեղինակն աշխատությունը բաժանել երկու մասի՝ գրականագիտական և լեզվաոճական:

Հնչյունաբանական ոճական աշխատանքներին հաջորդում է Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմի բառագիտական արժույթների քննությունը: Այս առումով խոսվում է իմաստաբանության (որոնք բազմազան են ու նպատակային և հատուկ են գեղարվեստական ոճին) մասին: Ակնառու են դառնում մեր բառապաշարի իմաստաբանական հարստության հնարավորությունները: Հետաքրքիր են մարդ, խիղճ, լուռ, գայլ բառայինների և նրանցից սերված միավորների իմաստաբանական կիրառության արժույթները: Առանձնակի օրինակներով հեղինակը բացահայտել է շիրազյան բառապաշարի՝ ըստ իմաստի ու ձևի բառերը (հոմանիշ, հականիշ, նույնանուն, հարանուն), կարևորել է դրանց դերը հայերենի բառաստեղծման գործընթացում:

Բավականին մեծ տեղ է տրված պոեմի բառաշերտերի քննությանը: Գիտական բոլոր կողմերով ջանասիրաբար լուսաբանված ցուցակով ներկայացված են նորակազմությունները, որոնք Հովհ. Շիրազի բառաստեղծական տաղանդի տիպականացված արտահայտություն են: Խոր ուշադրություն է դարձված նաև շրջապատներին, որոնք ներկայացված են ցուցակով: Մանրամասն խոսվում է պոեմի բառակազմական ձևերի աշխատատար գծունեության վրա: Տրված է ածանցների շարքը, կառուցվածքային տիպերը:

¹¹ Էջ 134, ն. գ.:

Այնուհետև քննարկվում են ձևաբանական լեզվաոճական առանձնահատկությունները, ուշադրություն է դարձվում գոյականի ու բայի քերականական ձևերի պատմական ոճավորմանը ուշադրություն դարձվում (գրաբարյան ու միջին հայերենյան որոշ կառույցներ աղերսվում են մեծ շիրագի ծննդավայրի խոսակցական ձևերին, որոնց կիրառությունն աներկբա նպատակային են): Ս. Մինասյանը յուրաքանչյուր խնդրահարույց հարց փորձել է հիմնավորել լեզվաբանական աղբյուրներով, գործող բառարաններով, քերականորեն ընդունված կանոններով:

Պոեմի շարահյուսական առանձնահատկությունների քննության բաժնում ուշադրություն է դարձված բոլոր միավորների առանձնահատկություններին: Մի շարք գծապատկերներով, հավաստի օրինակներով տրված են շարահյուսական հարաբերությունների դրսևորման տեսանկյունի ու համակարգված ձևերը:

Նախավերջին մասը նվիրված է պատկերային համակարգի քննությանը՝ իր ծավալուն երկու բաժիններով՝ այլաբերություն և արտահայտչականություն: Դրանց ենթատեսակները քննված են համապատասխան օրինակներով (հատկապես երգիծանքի տեսակները պոեմում ցույց է տրված խոսքաշարային՝ տեքստային, տիպականացված հանգամանքներում):

Ս. Մինասյանի ուշադրությունից չեն վրիպել պոեմում եղած հեղինակային և տպագրական վրիպակները:

Աշխատանքի վերջում հեղինակն տվել է գործածված մոտավորապես 7500 միավորի շարքը՝ այբբենական հերթականությամբ ու էջի նշմամբ (4500-ը բառույթներն են):

Ս. Մինասյանի լեզվագիտական աշխատանքը «Հովհաննես Շիրագի «Թոնդրակեցիները» պոեմի լեզվաոճական ուսումնասիրությունը» մեզ բերում է այն համոզման, որ «Բառերի մեջ է ամբարվում ժամանակի ոգին, բառերի մեջ պահպանվում են ժամանակի ծայները՝ մարդկանց մտքերը, հույզերը, խոհերը, տրամադրությունները, երազներն ու առարկայական իրականությունը: Բառը դառնում է ժամանակի էության կրողը, միաժամանակ այդ ամենի գերագույն բացահայտիչը: Բառը պատմություն է: Ժամանակի թրթռներն իրենց անմիջական արձագանքը գտնում են բառի՝ բարձրագույն արվեստի՝ պոեզիայի մեջ, որը և իր խորքում թաքցնում է բազմապիսի գաղտնիքներ, բազմաթիվ դյուրական ու ծանծրալի ծայներ»¹²:

Քննարկվող գրքի հեղինակը շնորհակալ գործ է կատարել՝ ուղղակի «պեղելով» հանճարեղ Շիրագի աշխարհը, նորից այնտեղ լույսի շողեր գտնելու հավատով: Եվ գտնվել են դրանք՝ առեցուն գեղագիտական խոսքի դրսևորման կապակցական բազմաբնույթ եղանակներով, հախուռն, հնի և նորի շաղախով՝ մերթ ջրվեժի նման շառաչուն, մերթ մեղմ ու անըջային, մերթ մեր ազգային վերքի նման կսկծացող: Հերքելով կաղապարված ավանդույթները՝ Հովհաննես Շիրագն արարել է մարդու կատարելատիպը՝ ներքին պայքարով, ճշմարտությունն ասելու համարձակությամբ ու հանդգնությամբ: Տեղին է հիշել շիրագյան աշխարհը մեծ ջանքերով այսօր էլ համալրող Ս. Մուրադյանի նոր գրած տողերը. «Հ. Շիրագն այն եզակի բանաստեղծն էր, ով այն ժամանակներում մտածում և գործում էր այնպես, ինչպես մենք այսօր՝ անկախության ու հեղափոխության օրերին, ով իր տարածանք գործերում առաջինն էր բարձրացնում համայն հայությանը հուզող կենսական հիմնախնդիրները՝ պատմական արդարությունը վերականգնելու, ցեղասպանությունը դատապարտելու և նրա հետևանքներն արդար հատուցմամբ վերացնելու, բռնությամբ խլվածը վերադարձնելով՝ հայրենիքը ամբողջացնելու և համայն հայությանն իր հայրենի պատմական հողատարածքների վրա

¹² Գասպարյան Դ., «Հայ գրականություն», Եր., 2007, էջ 387:

համախմբելու, Հայաստանում հայոց լեզուն անաղարտ պահելու և արյունաքամ սպիտակ եղեռնը հայապահպանությամբ կասեցնելու սուր հարցադրումները»¹³:

Ս. Մինասյանի կատարած ծավալուն աշխատանքը, իհարկե, անթերի չէ, մանավանդ որ վերլուծությունների որոշ հատվածներում ակնհայտ է շտապողականությունը, որից և շարադրանքի համակարգում զգացվում է փոքր-ինչ շեղում: Կարծես թե ասելիքի շատությունը խանգարում է հանգիստ դատողությանը, որից էլ երբեմն կարևորի և երկրորդականի սահմանները խաթարվում են: Այսուհանդերձ սրանք ստվեր չեն ձգում կատարված աշխատանքի վրա, քանզի արդյունքն ակնհայտ է, հեղինակի նպատակը պարզ է՝ բացահայտել հանրահռչակ Շիրազի գեղագիտական հանճարեղ մտածողությունը, պատմության ու արդիականության զուգորդումները պոեմում, թոնդրական շարժման նկատմամբ նրա մտորումներն ու վերաբերմունքը, միջնադարյան գիտական իրավաբանության ի հայտ գալու պատճառների բացահայտումը:

Անահիտ Աթայան
Բանասիրական գիտությունների թեկնածու

¹³ Գասպարյան Ռ., «Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու»՝ «Հովհաննես Շիրազի անտիպների աշխարհը», Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, Եր., 2018, էջ 407: